ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 21 մարտի 2007թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի
2-րդ դատական կազմը
Նախագահությամբ՝ Կ.Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Պողոսյանի
Հ.Նազարյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Արշալույս Հակոբյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Արշալույս Հակոբյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Գործում առկա է պետ. տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

Ա. Հակոբյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ